Ադրբեջանի ներկայացուցիչը հայ-ադրբեջանական կոնֆլիկտի մասին

Մոսկվայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությունում կայացած մամլո ասուլիսին, Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Զաուր Ռուսաև-զադեն այն կարծիքն է հայտնել, թե Ադրբեջանի նախկին ղեկավարության սխալն այն է եղել, որ հավատացել են կենտրոնին եւ դարաբաղյան խնդրի լուծման մեջ հույս են դրել նրա վրա: Ըստ ներկայացուցչի, *«Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք էր Ադրբեջանն ինքը միանգամից լուծեր»*:

Ըստ Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարար Նաքիկ Թալիբովի, ԼՂԻՄ-ում եւ Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում 4,5 տարվա ընթացքում մահացել է 272 մարդ, որոնցից 164-ը՝ քաղաքացիական անձինք, այդ թվում՝ 116 ադրբեջանցի եւ 48 հայ, 843 մարդ վիրավորվել է: Ն. Թալիբովը հաղորդել է, որ Ադրբեջանի տարածքի հայկական գյուղերը, որտեղից *«հայ բնակչությունն ինքնակամ մեկնել է անձնագրային ռեժիմի ստեղծումից հետո, այդ թվում նաեւ Գեղարքունիք գյուղից, բնակեցվել են Հայաստանից եկած ադրբեջանցի փախստականներով»*:

Ըստ փոխնախարարի, հանրապետության տարածքում կատարվող զինաթափման եւ անձնագրային ռեժիմի ստեղծման բոլոր գործողություններին հետեւում են Միության դատախազության ներկայացուցիչները:

Շոշափելով 1988 թվականի Սումգայիթի անկարգությունները, որոնց արդյունքում, ըստ պաշտոնական տվյալների, մահացել էր 30-ից ավելի մարդ, Ադրբեջանի ՆԳՆ-ի ղեկավարները հայտարարեցին, թե *«գլխավոր գործող անձանցից մեկը եղել է հայ, երեք անգամ դատված Էդուարդ Գրիգորյանը»*: Նրանց ասելով, *«սումգայիթյան ողբերգությունը ձեռնտու էր Երեւանին եւ բնականացված էր հայկական կողմից»*:

Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարարը մամլո ասուլիսի մասնակիցներին հավաստիացրեց, թե *«մենք կշարունակենք պայքարը հայկական զինված հրոսակախմբերի*